ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

158
(2638)

5 նոյեմբերի Շաբաթ 2022
տպագրության ԺԱ տարի

100 դրամ

քաղաք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 128

Չնայած իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամների եւ նրանց բարեկամների թվում շատ են այնպիսի անձինք, որոնք բանակում չեն ծառայել, այդուհանդերձ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանն իր որդու՝ Աշոտ Փաշինյանի՝ բանակում ծառայելը դրոշակ էր դարձրել: Մասնավորապես, 2018 թվականի նոյեմբերի 28-ին՝ արտահերթ խորհրդարանական ընտրությունների քարոզարշավի ընթացքում, Նիկոլ Փաշինյանը նշել էր, թե ինքը ՀՀ միակ ղեկավարն է, ում որդին ծառայում է բանակում, եւ այն էլ՝Արցախում: Նա նաեւ հավելել է. «Նույնիսկ Ղարաբաղի ղեկավարների երեխաները Ղարաբաղում չեն ծառայել եւ ընդհանրապես բանակում չեն ծառայել»: Սակայն, ինչպես հաճախ է պատահում, սա Փաշինյանի հերթական սուտ եւ մանիպուլացնող հայտարարություններից է եղել: Իսկ ո՞րն է իրականությունը. Արցախի այդ ժամանակվա նախագահ Բակո Սահակյանի որդին ծառայել է բանակում, նախկին նախագահ Արկադի Ղուկասյանի որդին եւս: Բանակում ծառայել են նաեւ Լեւոն Տեր-Պետրոսյանի որդին՝ Դավիթ Տեր-Պետրոսյանը, եւ Ռոբերտ Քոչարյանի երկու որդիները՝ Սեդրակն ու Լեւոնը: Սերժ Սարգսյանը որդի չունի: Փաստորեն, անգամ բանակում ծառայելու թեման է ժամանակին շահարկվել Փաշինյանի կողմից, եւ նա հերթական անգամ խաբել է ՀՀ հպարտ եւ արժանապատիվ քաղաքացիներին:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ իշխող «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության հերթական համագումարի ժամանակ, երբ ՔՊ-ականները քվեարկությամբ վարչության անդամներ են ընտրել, կուսակցության ներսում ներքին հրահանգ է եղել անել հնարավորը, որ ՔՊ-ական պատգամավոր Արսեն Թորոսյանը վարչության կազմում չընդգրկվի, եւ հակառակը՝ ամեն ինչ անել, որ ՔՊ վարչության անդամությունում իր պատվավոր տեղը Համբարձում Մաթեւոսյանն ունենա: «ՔՊ-ական «լիդերների» հրահանգները տեղ հասել են, բայց, փաստորեն, խայտառակ ձեւով կազմակերպված, վատ հաշվարկված ընտրության վերահաշվարկից հետո պարզ է դարձել՝ Մաթեւոսյանին վարչության անդամություն ընդգրկողները վատ են աշխատել: Այս պատմությունն իրականում մեծ աղմուկ է առաջացրել, ավելին՝ կուսակցության ներսում «մենամարտեր» են սկսվել: Չի բացառվում, որ առաջիկայում ՔՊ-ականներն այս թեմայի վերաբերյալ Փաշինյանի հետ քննարկում ունենան, ինչ-որ մարդկանցից հաշիվ պահանջեն»,- «Ժողովուրդ» օրաթերթին ասաց ՔՊ-ամերձ մեր աղբյուրը: Նշենք, որ «Ժողովուրդ» օրաթերթն առաջինն էր գրել, որ ՔՊ-ի՝ խայտառակ կերպով ձեւավորված վարչության կազմում փոփոխություններ են տեղի ունեցել, ու վերահաշվարկից հետո Մաթեւոսյանն ու Կոնջորյանը վարչության անդամությունից դուրս են մնացել: Տեղեկությունն արդեն երեկ հենց իրենք՝ ՔՊ-ականները հաստատեցին: Մեր զրուցակիցը նշեց նաեւ, որ Մաթեւոսյանի գլխին իրականում սեւ ամպեր են կուտակված, ու կառավարությունը մտադիր է հրաժեշտ տալ նրան: Չի բացառվում Փաշինյանն առաջիկայում նրան հրաժարական տալու դիմում գրել տա: Տեղեկության մասով, իհարկե, մենք փորձեցինք նաեւ պարոն փոխվարչապետի տեսակետը լսել, բայց նրա աշխատակազմից որեւէ մեկի հեռախոսահամարը մեր բազմաթիվ զանգերին այդպես էլ չարձագանքեց: Հետաքրքիր է, թե Մաթեւոսյանի աշխատակազմն ինչով է զբաղված, երբ տարրական հեռախոսազանգերին անգամ չի պատասխանում:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն ուշագրավ որոշում է կայացրել, որը խառնաշփոթ է ստեղծել պետական պաշտոն զբաղեցնող անձանց շրջանում: Մասնավորապես, մեզ հայտնի դարձավ, որ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը որոշել է վերլուծել պետական պաշտոն զբաղեցնող անձանց եւ նրանց ընտանիքների անդամների՝ 2021 թվականի տարեկան հայտարարագրերը, ինչպես նաեւ 2022 թվականի պաշտոնեական պարտականությունները ստանձնելու, դադարեցնելու հայտարարագրերը: Մեր տեղեկություններով՝ անգամ հանձնաժողովը սահմանել է ցանկը՝ ՀՀ նախագահ, ՀՀ վարչապետ, Ազգային ժողովի նախագահ, Ազգային ժողովի նախագահի տեղակալներ, ոստիկանության պետ, գլխավոր դատախազ, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ, տեղակալներ, Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ եւ այսպես շարունակ: Այս պահի դրությամբ ցանկում ներառվել են 95 պետական պաշտոն զբաղեցնող կառույցներ, եւ չի բացառվում՝ ցանկը ավելանա: Եվ, ահա, այս նոր որոշումն էլ որոշակի անհանգստություն է առաջացրել պետական պաշտոն զբաղեցնող անձանց շրջանակում: Բանն այն է, որ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը համապատասխան վերլուծության ընթացքում ուժային կառույցների օպերատիվ-հետախուզական գործունեության բաժին դիմում է ներկայացնելու, որ կոնկրետ պետական պաշտոն զբաղեցնող անձանց գույքի մասով իրենց տեղեկություն տրամադրեն, ինչը ենթադրում է, որ այս որոշման արդյունքում չի բացառվում, որ ուժային կառույցները մտնեն պետական պաշտոն զբաղեցնող անձանց պատկանող սեփականություններ. ստուգվելու է կենցաղին առնչվող մանրամասներ, մեկ բառով ասած՝նրանց տները, ունեցվածքը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
CPC ARMENIA

Մինչեւ 2024 թվականի հունվարի 1-ը կդադարեցվի ՀՀ քաղաքացիներին կենսաչափական անձնագրերի տրամադրումը՝ տեխնոլոգիաներով եւ անվտանգության պայմաններով օժտված կենսաչափական անձնագրերի ստեղծմամբ պայմանավորված: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ ՀՀ ոստիկանությունն առաջարկում է փոփոխություն կատարել «ՀՀ քաղաքացու անձնագրի մասին» օրենքում: Հաջորդ տարվա հունվարի 1-ից դադարեցվելու է ՀՀ կառավարության՝ 1998 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 821 որոշմամբ նախատեսված հին նմուշի անձնագրերի տրամադրումը, փոխանակումը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Հայաստանի Հանրապետությունը մտադիր է ամբողջությամբ անցում կատարել կենսաչափական տվյալներ պարունակող անձը հաստատող փաստաթղթերի տրամադրմանը, որի շրջանակներում ՀՀ կառավարությունը որոշում է կայացրել ներդնել կենսաչափական փաստաթղթերի տրամադրման համակարգ: Ավելին՝ մեզ հայտնի դարձավ, որ ՀՀ փոխվարչապետի գլխավորությամբ ստեղծվել է Տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգի կառավարման խորհուրդ: Անգամ ընտրվել են միջազգային խորհրդատուներ, որոնք արդեն իսկ սկսել են ուսումնասիրությունները, եւ առաջիկայում ՀՀ կարիքներին համահունչ առաջարկություններ կներկայացնեն: «Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ մինչեւ այս տարեվերջ կներդրվեն «խելացի» եւ «շարժական կապի» էլեկտրոնային նույնականացման համակարգերը, որոնք ոչ միայն գործող էլեկտրոնային քարտեր ունեցող անձանց համար, այլ նաեւ մինչեւ նոր համակարգի ներդրումը էլեկտրոնային ստորագրության ծառայության կարիք ունեցող անձանց համար կապահովեն հարմարավետ ծառայություն:

ՄԵԾ ԽԱՂ

ՀՀ-Ն ԴԻՏՈՐԴԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՈՒՆԻ ՍՈՍԿ

«Ժողովուրդ» օրաթերթի զրուցակիցն է թուրքագետ Ռուբեն Մելքոնյանը:

-Պարոն Մելքոնյան, Սոչիում կայացած Փաշինյան-Պուտին-Ալիեւ եռակողմ հանդիպումից հետո խոսվում է նախկինում ձեռք բերված պայմանավորվածությունները կյանքի կոչելու մասին, բայց որեւէ խոսք չկա Արցախի ու Հայաստանի հետագա ճակատագրի մասին: Քաղաքական ու անվտանգային իմաստով ի՞նչ փաստաթուղթ է այն:

-Նախեւառաջ, սկսենք այն հանգամանքի վերլուծությունից, որ երբ քաղաքական իշխանությունն ասում էր, թե «Արցախյան հարցի բանակցությունները սկսում է սեփական՝ զրոյական, կետից», իրականությունն այլ բան ցույց տվեց. դիվանագիտական այնպիսի «ֆիասկոների» կամ ցածր նշաձողի է հասել, որ փաստաթղթում անգամ «Լեռնային Ղարաբաղ» կամ «Ղարաբաղ» տերմինը չկա: Օրվա իշխանությունը, որ նախկիններին մեղադրում էր Արցախը հանձնելու մեջ, կերազեր ունենալ նախկին փաստաթղթերից ինչ-որ մեկը, որտեղ ոչ միայն «Լեռնային Ղարաբաղ» եզրույթն էր օգտագործվում, այլ նաեւ «ինքնորոշման իրավունքի» մասին էր խոսվում: Մյուս հանգամանքն այն է, որ Սոչիում ստորագրված եռակողմ փաստաթուղը, այսպես ասած, ժամանակ ձգելու վերաբերյալ փաստաթուղթ է, երրորդը՝ փաստաթուղթ է, որտեղ ուժային բալանսի փոփոխություն է արձանագրվում: Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի՝ Սոչիի հանդիպումից հետո արած հայտարարությունն այն բանի վկայումն է, որ այն, ինչ Ռուսաստանը ցանկացել է, որ տեղ գտնի փաստաթղթում, տեղ չի գտել: Ակնհայտ է, որ այդ փաստաթուղթը թուրք-ադրբեջանական ուժեղացած տանդեմի ձեռքբերումներից մեկն է: Սա փաստաթուղթ է, որտեղ Արցախի, Հայաստանի ու հայկական երկու հանրապետությունների հետ կապվող հարցեր՝ռազմագերիներ, ՀՀ սուվերեն տարածքների օկուպացիա, տեղ չեն գտել: Եվ ես այն համոզմանն եմ, որ ո՛չ այս փաստաթուղթը, ո՛չ մեկ այլ փաստաթուղթ չի կարողանալու զսպել թուրք-ադրբեջանական տանդեմի ագրեսիան:

-Տեսակետ կա, որ Ռուսաստանն ու Թուրքիան, այսինքն՝ գերտերությունները, իրենց համար գծում-բաժանում են, ինչի պատճառով գուցե շահում է Ադրբեջանը, տուժում՝ Հայաստանը: Սա իսկապե՞ս գերտերությունների խաղ է, ու մենք սոսկ խաղացողներն ենք:

-Ընդհանրապես միշտ էլ աշխարհում մեծ խաղերը գերտերություններն են խաղում, գերտերություններն են նաեւ քարտեզները գծում, իսկ փոքրերը փորձում են ինչ-որ սրբագրումներ անել, որոշ կետեր փոփոխել: Ցավոք, Հայաստանը հիմա այն իրավիճակում է, որ ոչ միայն խաղացող չէ, այլեւ այդ պայմանագրերում կամ փաստաթղթերում ամենաանշան փոփոխությունները, սրբագրումներն անելու ի զորու չէ: Եվ, բնականաբար, Հայաստանը, լծակների կամ հնարավորությունների առումով չպետք է համեմատվի գերտերությունների հետ, բայց այն, որ Հայաստանի ճակատագիրը որոշվում է առանց Հայաստանի, ու ՀՀ-ն այդ հանդիպումների ժամանակ որպես բուտաֆորիա է ներկայանում, նույնպես ակնհայտ է, հետեւաբար սա մեր երկրի դիվանագիտական կապիտուլիացիայի փուլ կարող ենք համարել:

-Ի՞նչ բանակցությունների մեջ են հիմա Թուրքիան ու Ռուսաստանը: Այդ բանակցությունները կարծես դրական ճանապարհով են գնում:

-Պետք է ֆիքսենք ու ընդունենք, որ Թուրքիայի դերակատարումը թե՛ աշխարհում, թե՛ տարածաշրջանում փոխվել է, ու Թուրքիային եւ Ռուսաստանին կապող տնտեսական, քաղաքական շահերն այժմ ավելի տեսանելի են դարձել, հետեւաբար այս մեծ խաղերի կոնտեքստում Հայաստանի շահը բավական հեշտությամբ զիջվել է: Ակնկալել, որ այս պարագայում այլ պետությունները՝Ռուսաստանը, իր շահերը ստորադասելու է մեր շահերին ու ամեն ինչ անելու է մեզ համար, միամտություն է: Հիմա Թուրքիան Ռուսաստանի համար կարեւոր նշանակություն ունի, թուրք-ռուսական համագործակցությունն աշխարհաքաղաքական նոր օջախ կամ ծանոթության կենտրոն է ձեւավորում: Եվ այս համատեքստում, պարզ է, որ շահողի դիրքերում կարող է հայտնվել Թուրքիայի եղբայրական պետություն Ադրբեջանը: Հայաստանն այս ամբողջ խաղի մեջ ոչ միայն գործոն չէ, այլ նաեւ հուսալի գործընկեր չէ ու բանակցությունների մեծ սեղանին կամ աշխարհաքաղաքական խաղի այս համապատկերում առաջարկելու ոչինչ չունի, հետեւաբար ՀՀ-ն դիվանագիտական մեծ խաղի մեջ, որտեղ նաեւ իր ճակատագիրն է որոշվում, դիտորդի կարգավիճակում է սոսկ:

Զրուցեց ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆԸ

ՊԱՏԳԱՄԱՎՈՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՉԷ

«Ժողովուրդ» օրաթերթը երեկ գրել էր, որ ՀՀ նորանշանակ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանն առաջիկայում խորհրդարան կմտնի 3 պատգամավորների մեղադրանք առաջադրելու եւ կալանավորելու միջնորդությամբ:

Խոսքը «Հայաստան» խմբակցության ղեկավար Սեյրան Օհանյանի, նույն խմբակցության պատգամավորներ Վահե Հակոբյանի եւ Արմեն Չարչյանի մասին է, որոնց դատախազը կմիջնորդի պատգամավորական անձեռնմխելիությունից զրկել:

Երեկ հայտնի դարձավ, որ Վահե Հակոբյանին, նրա եղբորը ու եղբոր կնոջը ՊԵԿ-ը հրավիրել է հարցաքննության: Թե ինչ գործի շրջանակներում է պատգամավորը հրավիրվել հարցաքննության, դեռ հայտնի չէ:

Հավելենք, սակայն, որ, ArmLur.am-ի տեղեկություններով, Վահե Հակոբյանն այս պահին Հայաստանում չէ: Նշենք նաեւ, որ հայտնի չէ, թե նա երբ է լքել երկիրը:

ՔՊ–ԱԿԱՆՆԵՐԻՆ ՉԻ ՀԵՏԱՔՐՔՐՈՒՄ

Այս օրերին խորհրդարանում շարունակվում է 2023 թվականի բյուջեի քննարկումը: Կառավարական կաբինետի ու պետական բյուջեից սնվող պետական բոլոր կառույցների ներկայացուցիչները հերթով գալիս ու խորհրդարանում ներկայացնում են, թե եկող տարվա համար ինչքան գումար են ուզում պետբյուջեից: Այնուհետ սկսում են հիմնավորել՝դա ինչի վրա են ծախսելու, ինչ են անելու այդ գումարներով եւ այլն:

Խորհրդարանական ընդդիմությունը ԱԺ լիագումար նիստերի նման բյուջեի քննարկումները բոյկոտել ու չի մասնակցում դրանց, ԱԺ մեծամասնությունն առանց նախապես հայտարարված բոյկոտի էլ, կարելի է ասել, «բոյկոտել է» այն: Բացառությամբ չորեքշաբթի օրվա, երբ խորհրդարան էր եկել վարչապետ Նիկոլ Փաշինյանը, մյուս բոլոր օրերին Ազգային ժողովի 334 սրահում, որտեղ որ անցկացվում են քննարկումները, մատների վրա հաշված պատգամավորներ են եղել: Դահլիճում ներկա պատգամավորների թիվն այս օրերին 6-ը չի գերազանցել, այնինչ «Քաղաքացիական պայմանագիրն» ԱԺ-ում 71 պատգամավոր ունի: Կիսադատարակ դահլիճը որոշ չափով մարդաշատ է երեւում շնորհիվ տեղից աշխատող լրագրողների ու ԱԺ հանձնաժողովների փարձագետ-աշխատակիցների:

Սա թերեւս այն բանի վկայումն է, որ իշխանությանն ու պատգամավորներին չի հետաքրքրում, թե պետական գերատեսչություններից որ մեկն ինչի համար է պետբյուջեից գումար ուզում: ՔՊ-ականները խորհրդարան կազմ-պատրաստ ներկայանում են միայն այն ժամանակ, երբ Փաշինյանը տարածքում է, ու ամեն մեկն իր հերթին գերազանցիկ աշակերտի տպավորություն ստեղծելու խնդիր ունի:

ԼՈՒՐԵՐ

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԵՂԾՈՂ

«Ժողովուրդ» օրաթերթը երեկ էր գրել, որ իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության՝ վարչության անդամների խայտառակ կերպով կազմակերպված ընտրություններից հետո վարչության կազմից դուրս են մնացել փոխվարչապետ Համբարձում Մաթեւոսյանն ու ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար, նախկինում ԼՀԿ-ական եղած, Էդմոն Մարուքյանի սանիկ Հայկ Կոնջորյանը:

Փաստ է՝ ՔՊ-ում չեն կարողանում ընտրություններ կեղծել, սակայն, այս ամենին զուգահեռ, իշխող ՔՊ-ում իրավիճակ է փոխվել, եւ նախկին ժողովրդավար ու թափանցիկ աշխատող կուսակցությունն արդեն ամեն ինչ գաղտնի է անում: ՔՊ-ի վերջին համագումարը 2019 թվականին էր, որին ներկա էին ՁԼՄ-ներ, վարչության ընտրությունների հաշվարկը ուղիղ հեռարձակվում էր:

3 տարում ՔՊ-ն էապես փոխել է իր պատկերացումները: Նախ՝ ՔՊ-ի կայքից հանվել է գրեթե ամեն ինչ՝ նախկին ծրագրերը, վարչության կազմը, հաշվիչ հանձնաժողովի կազմը, անգամ չեք կարող իմանալ կուսակցության գրասենյակների հասցեներն ու հեռախոսահամարները:

ՔՊ-ի այս համագումարին արգելվել է ՁԼՄ-ների մասնակցությունը, հաշվարկն արվել է փակ դռների հետեւում եւ, ինչպես պարզվեց, կեղծվել է:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

«Ադրբեջանից հայկական կողմին փոխանցված 10 հայ գերու մարմիններից 5-ի պարագայում ունենք արդեն հաստատված փորձաքննության արդյունքները, մյուսներինն էլ ընթացքի մեջ է. երբ ամբողջական ավարտենք, ես լրացուցիչ կտեղեկացնեմ»,- երեկ՝ նոյեմբերի 4-ին, ԱԺ-ում լրագրողների հետ զրույցում նշեց առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը:

Անդրադառնալով նրան, որ 44-օրյա պատերազմից հետո եւս կային մարմիններ, որոնց հետ կապված փորձաքննություններ էին իրականացվել, Ավանեսյանն ասաց. «Այդ պրոցեսն ամբողջովին ավարտված է: Արտերկիր ուղարկված փորձաքննությունների, նույնականացումների ամբողջ պրոցեսը փաստաթղթավորված է: Իհարկե, ունենք դեպքեր, երբ նույնականացված մարմինները ծնողների կողմից չեն ընդունվել, չեն հուղարկավորվել: Սա շատ նուրբ թեմա է, եւ որքան ժամանակն անցնում է, այնքան դժվարանում է այդ գործընթացը»:

Նա նաեւ նկատեց, որ կառավարությունն ունի պարտավորություն՝ կապված այդ մարմինները հողարկավորելու հետ: «Մենք եւս մեկ ընթացքով ծնողների, հարազատների հետ աշխատելուց հետո միացյալ հանձնաժողովային որոշումներ կկայացնենք հուղարկավորություններն իրականացնելու: Մենք պետք է հաշվի առնենք թե՛ հոգեւոր, թե՛ սանիտարահիգիենիկ եւ թե՛ բազում այլ նրբություններ, որոնք չեն կարող տարիներով լուծում չստանալ»,- ընդգծեց նախարարը:

Հիշեցնենք՝ հոկտեմբերի 27-ին Ադրբեջանը 10 հայ զինծառայողի մարմին էր հանձնել հայկական կողմին:

ԱՐՑԱԽՈՒՄ ՕԴԸ ԿԱՆԳՆԵԼ Է

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ ՀՀ երրորդ նախագահ, ՀՀԿ նախագահ Սերժ Սարգսյանն արդեն մի քանի օր է՝ Արցախում է եւ ակտիվ հանդիպումներ է ունենում:

Տեղեկացանք, որ երկուշաբթի օրը լրանում է Սերժ Սարգսյանի մայրիկի՝ տիկին Նորայի մահվան մեկ տարին: Այդ առիթով Հայաստանից նախկին քաղաքական եւ ոչ քաղաքական էլիտան՝ նախկին ու ներկա պաշտոնյաները, գնալու են Արցախ: Նաեւ հենց դա է պատճառը, որ այս պահի դրությամբ արդեն ազատ հյուրանոցներ գրեթե չկան Արցախի մայրաքաղաքում: Մեծ թվով մարդիկ են Հայաստանից մեկնելու Արցախ՝ մասնակցելու Սերժ Սարգսյանի մայրիկի մահվան մեկ տարվա տարելիցի արարողությանը:

ՆՈՐ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արցախի Հանրապետության նախագահ Արայիկ Հարությունյանը նոյեմբերի 4-ին ստորագրել է հրամանագիր՝ Արտակ Արտյոմի Բեգլարյանին պետական նախարարի պաշտոնից ազատելու մասին:

Պետական նախարար է նշանակվել Ռուբեն Կառլենի Վարդանյանը:

Երկրի ղեկավարի մեկ այլ հրամանագրով՝ փոփոխություն է կատարվել «Արցախի Հանրապետության պետական նախարարի կողմից նախարարների գործունեության համակարգման մասին» ԱՀ նախագահի հրամանագրում, համաձայն որի՝ պետական նախարարը համակարգելու է հետեւյալ նախարարների գործունեությունը՝

1) առողջապահության նախարար,
2) արդարադատության նախարար,
3) արտաքին գործերի նախարար,
4) գյուղատնտեսության նախարար,
5) կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար,
6) սոցիալական զարգացման եւ միգրացիայի նախարար,
7) տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար,
8) քաղաքաշինության նախարար,
9) ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարար:

Նախագահի՝ նույն օրվա մեկ այլ հրամանագրով՝ փոփոխություններ եւ լրացումներ են կատարվել «Արցախի Հանրապետության կառավարության եւ պետական կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման կարգը սահմանելու մասին» ԱՀ նախագահի հրամանագրում, համաձայն որի՝ պետական նախարարին վերապահված են նաեւ Արցախի Հանրապետության պետական կառավարման հետեւյալ մարմինների ղեկավարների գործունեության համակարգման գործառույթներ՝

-պետական վերահսկողական ծառայության պետի,
-կադաստրի եւ պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի,
-նյութական վնասների հարցերի կոմիտեի նախագահի,
-պետական եկամուտների կոմիտեի նախագահի,
-պետական տեսչությունների կառավարման կոմիտեի նախագահի,
-ջրային կոմիտեի նախագահի:

ՀԱՍՏԱՏՎԵՑ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԱՐՑԱԽՈՒՄ

Նոյեմբերի 3-ի երեկոյան Արցախի Ազգային ժողովը 30 կողմ ձայնով Սահմանադրության փոփոխության նախագիծը ուղարկել է Գերագույն դատարան՝ դրա սահմանադրականության հարցը որոշելու համար: Մինչ այդ՝ հոկտեմբերի 27-ին, առաջին ընթերցմամբ միաձայն ընդունվել էր այն:

Նախագծով մի քանի փոփոխություններ են արվելու: Սահմանադրության մի շարք հոդվածներ կարող են փոփոխվել առանց հանրաքվեի. դրա համար բավարար է պատգամավորների ընդհանուր թվի առնվազն երկու երրորդի որոշումը: Փոփոխությունները կարող են նախաձեռնել հանրապետության նախագահը, ընտրական իրավունք ունեցող քաղաքացիների առնվազն հինգ տոկոսը եւ պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդը: Սահմանադրության փոփոխությամբ՝ նախագահական համակարգից անցում է կատարվելու կառավարման կիսանախագահական համակարգի:

Նախագծով նաեւ փոփոխություններ են արվել: Ավելի վաղ հրապարակված Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի նախագծում ասվում էր, որ խորհրդարանական եւ նախագահական ընտրություններն անցկացվելու են առանձին՝ համապատասխանաբար 2023 եւ 2024 թվականներին, սակայն ԱԺ մտած նախագծում այս դրույթը չկա:

Նկատենք՝ Արցախի գործող Սահմանադրությունն ընդունվել է 2006-ին, փոփոխվել՝ 2017-ին: Սահմանադրության ընդունման, ինչպես նաեւ փոփոխման պահին Արցախի իրավազորությունը տարածվում էր ոչ միայն նախկին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի (ԼՂԻՄ) գերակշիռ մասի, այլեւ նախկին ԼՂԻՄ-ին հարակից Խորհրդային Ադրբեջանի յոթ շրջանների վրա՝ ամբողջությամբ կամ մասամբ: 2020-ի պատերազմից հետո Արցախը կորցրել է վերահսկողությունը ոչ միայն յոթ շրջանների, այլեւ նախկին ԼՂԻՄ-ի որոշ տարածքների նկատմամբ, այդ թվում՝ Շուշի քաղաքի եւ ամբողջ Հադրութի շրջանի:

Արցախի Հանրապետության Սահմանադրության փոփոխության նախագծով առաջարկվում է ամրագրել սահմանադրաիրավական փոփոխությունների իրականացման առավել ճկուն գործիքակազմ՝ այդկերպ կանխելով սահմանադրական հնարավոր ճգնաժամերը՝ հաշվի առնելով աշխարհաքաղաքական զարգացումները, Արցախի Հանրապետության ռազմաքաղաքական ներկայիս իրավիճակը, ներքին եւ արտաքին սպառնալիքները: Սահմանադրաիրավական փոփոխությունների ճկունությունն ապահովելու նպատակով առաջարկվում է վերանայել Սահմանադրության փոփոխման եղանակներին առնչվող իրավակարգավորումները՝ անփոփոխ թողնելով գործող Սահմանադրության 163-րդ հոդվածը, համաձայն որի՝ Սահմանադրության 1-4-րդ եւ 163-րդ հոդվածները փոփոխման ենթակա չեն:

Արդյունքում առաջարկվում է սահմանել, որ Սահմանադրությունը եւ Սահմանադրության 175-րդ հոդվածում «Արցախի Հանրապետության իրավազորության սահմանները» փոփոխություններն ընդունվում են միայն հանրաքվեով՝ անփոփոխ թողնելով Սահմանադրություն ընդունելու, փոփոխելու նախաձեռնության իրավունք ունեցողների շրջանակը:

Նախագծով, միաժամանակ, առաջարկվում է սահմանել, որ Սահմանադրության մյուս հոդվածներում փոփոխություններն ընդունում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի, հանրապետության նախագահի կամ ընտրական իրավունք ունեցող քաղաքացիների առնվազն հինգ տոկոսի նախաձեռնությամբ՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով ընդունված որոշմամբ:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԳԱՂՏՆԻ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Իսպանիայի Կոնգրեսը նոյեմբերի 3-ին կայացած լիագումար նիստի ընթացքում 174 դեմ, 132 կողմ եւ 35 ձեռնպահ ձայներով չի վավերացրել 2021 թ. դեկտեմբերի 14-ին Իսպանիայի եւ Ադրբեջանի միջեւ ստորագրված համաձայնագիրը՝ գաղտնի տեղեկատվության փոխանակման մասին: Այս մասին տեղեկանում ենք Իսպանիայում ՀՀ դեսպանության ֆեյսբուքյան էջից:

ԵԽ խորհրդարանականներ

Նոյեմբերի 1-ին ԱՀ ԱԺ նախագահ Արթուր Թովմասյանի գլխավորած պատվիրակությունը, որի կազմում էին ԱՀ խորհրդարանի խմբակցությունների պատասխանատուները, ՀՀ ԱՀ ներկայացուցչությունում Եվրոպայի ՀՅԴ Հայ Դատի գրասենյակի նախագահ Գասպար Կարապետյանի նախաձեռնությամբ եւ մասնակցությամբ հանդիպել են Եվրոպական խորհրդարանի մի խումբ պատգամավորների հետ:

ԵԽ պատգամավորներից հանդիպմանը ներկա էին ԵԺԿ քաղաքական խմբի անդամ, Արցախի հետ ԵԽ բարեկամության խմբի համահիմնադիր Պիտեր Վան Դալենին, ԵԽ նախկին փոխնախագահ, իտալացի անկախ պատգամավոր Ֆաբիս Մասիմո Կաստալդոնին, գերմանացի պատգամավոր, ԵՊՌ քաղաքական խմբի անդամ Լարս Պատրիկ Բերգին:

Երկուստեք քննարկել են 2020թ. աշնանային պատերազմի հետեւանքները, ինչպես նաեւ Արցախի Հանրապետության շուրջ ծավալվող քաղաքական զարգացումները, ներկա եւ ակնկալվող մարտահրավերները եւ դրանց դիմագրավելու հնարավոր տարբերակները, տարածաշրջանային տրամադրությունները:

Հյուրերը պատրաստակամություն են հայտնել մշտապես սատարել Արցախի ժողովրդին եւ կանգնել արցախահայության կողքին:

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ՝ ՌԴ–ՈՒՄ

Աշխատատանքային այցով ՌԴ-ում գտնվող ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Կարեն Բրուտյանը նոյեմբերի 4-ին հանդիպել է ՌԴ պաշտպանության նախարարի տեղակալ, գեներալ-գնդապետ Ալեքսանդր Ֆոմինի հետ:

ՊՆ-ից հայտնում են, որ զրուցակիցները քննարկել են երկկողմ ռազմական եւ ռազմատեխնիկական համագործակցության ընթացքը, ինչպես նաեւ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր:

ՀՐԱԺԱՐՎԵԼ Է

ՀԵՐԹԱԿԱՆ ՄԵՂԱԴՐՅԱԼԸ

Մերի Սարգսյանին մեղադրանք է առաջադրվել, որ նա, ՀՀ ՊՆ N զորամասի հրամանատարի՝ 2018 թվականի հոկտեմբերի 10-ի հրամանով, հանդիսացել է ՀՀ ՊՆ N զորամասի 2-րդ հրաձգային գումարտակի 5-րդ հրաձգային վաշտի ավտոմոբիլային ջոկի ռադիոհեռախոսավար, կոչումով կրտսեր սերժանտ, նույն զորամասում 2022 թվականի սեպտեմբերի 14-ին հրաժարվել է զինվորական ծառայության առանձին՝ ՀՀ ՊՆ N զորամասի հրամանատարի 2022 թվականի սեպտեմբերի 14-ի հրամանով սահմանված Ջերմուկ քաղաքի մատույցներում պատշտպանության անցնելու պարտականությունները կատարելուց, որը զուգորդվել է դրանց չկատարմամբ:

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ, մեզ հասած տեղեկությունների համաձայն, նախաքննական մարմիններն այս օրերին լուրջ քննություն են սկսել սեպտեմբերի 13-ին եւ 14-ին սկսված պատերազմի գործողությունների մասով: Քննչական մարմինները լծվել են զորամասերի անձնակազմին հարցաքննելու գործին եւ փորձում են հասկանալ, թե ինչու եւ ինչպես ստացվեց, որ երկու օրվա մեջ հակառակորդն այդքան դիրքային առավելություն ունեցավ:

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ առաջիկայում սեպտեմբերի 13-ի եւ 14-ի պատերազմի ընթացքում տեղի ունեցած դեպքերով մեղադրանքների առաջադրման տեղատարափ է լինելու, ասել է թե՝ իրավապահ համակարգը տարածքների կորստի բեռը ջարդելու է զորամասի անձնակազմի «գլխին», թե ով ինչ արեց կամ չարեց հայրենիքը փրկելու համար:

Առաջին մեղադրանքն առաջադրվել է ՀՀ ՊՆ N զորամասի բուժկետի պետին, որ նա հրաժարվել է պատերազմի ժամանակ զորամասի հրամանատարի հրամանը կատարել:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԳՈՐԾԸ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ Է

Լոռու մարզի Թումանյան խոշորացված համայնքի ավագանու անդամի սպանության գործով նախաքննության ավարտ է հայտարարվել, եւ գործը ուղարկվել է դատարան:

Վիգեն Մաթեւոսյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2022 թվականի մարտի 20-ին՝ ժամը 21:30-ի սահմաններում, միայնակ գնացել է Լոռուտ բնակավայրի համայնքային վարչական շենքին հարող տարածք, որտեղ տեսնելով Էդգար Մելիքսեթյանին, ավտոմեքենայից վերցնելով իր անվամբ ՀՀ ոստիկանությունում հաշվառված ակոսափող որսորդական հրազենը՝ ապօրինաբար Էդգար Մելիքսեթյակին կյանքից զրկելու դիտավորությամբ առնվազն երկու անգամ կրակել է վերջինիս, որից հետո Էդգար Մելիքսեթյանը «Վանաձոր» բժշկական կենտրոնի վերակենդանացման բաժանմունքում մահացել է:

Հավելենք, որ սպանվածը Լոռու մարզի Թումանյան համայնքի «Հանրապետություն» խմբակցության ավագանու անդամ Էդգար Մելիքսեթյանն էր:

Ինչի՞ց էր սկսվել վեճը:

Հիշեցնենք՝ մարտի 21-ին՝ ժամը 19:30-ի սահմաններում, Լոռու մարզի Լորուտ գյուղում՝ համագյուղացու տանը, վիճաբանություն էր տեղի ունեցել Էդգար Մելիքսեթյանի ու 19-ամյա Նաիրի Մաթեւոսյանի միջեւ: Վերջինս վիճաբանության մասին հայտնել էր իր հորը՝ 43-ամյա Վիգեն Մաթեւոսյանին, ինչից հետո նա էլ, ըստ նախնական տեղեկությունների, վրեժխնդիր լինելու նպատակով գյուղամիջում հրազենից կրակել էր Է. Մելիքսեթյանի ուղղությամբ, որից հետո վերջինս տեղափոխվել էր Վանաձորի հիվանդանոց, որտեղ հաջորդ օրը մահացել էր:

Դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 1-ին մասով եւ 235-րդ հոդվածի 1-ին մասով (Ապօրինի կերպով զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելը, իրացնելը, պահելը, փոխադրելը կամ կրելը), որի նախաքննության կատարումը հանձնարարվել է քննչական խմբին:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՄԱՆՐԱՄԱՄՆԵՐ՝ ՎԹԱՐԻՑ

ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածի 3-րդ մասով նախաձեռնված քրեական վարույթի շրջանակներում իրականացվում են քննչական եւ վարութային այլ գործողություններ՝ Արմավիրի մարզում տեղի ունեցած եւ 4 անձի մահվան պատճառ դարձած ճանապարհատրանսպորտային պատահարի հանգամանքները պարզելու ուղղությամբ:

Նախնական տվյալներով՝ 2022թ. նոյեմբերի 3-ին՝ ժամը 18:50-ի սահմաններում, Արմավիրի մարզի Մրգաշատ գյուղից դեպի Արմավիր քաղաք տանող ավտոճանապարհին միմյանց են բախվել 61-ամյա տղամարդու կողմից վարած երթուղային «Գազել» եւ 46-ամյա տղամարդու կողմից վարած «Ջիլ» մակնիշի ավտոմեքենաները, որի հետեւանքով ստացած մարմնական վնասվածքներով Արմավիրի բժշկական կենտրոն բուժօգնության է տեղափոխվել «Գազել» մակնիշի ավտոմեքենայի 8 ուղեւոր, իսկ 4 ուղեւոր մահացել է:

Նախաքննության ընթացքում կատարվել է դեպքի վայրի զննություն, նշանակվել է դատաբժշկական փորձաքննություն, հարցաքննվել է «Ջիլ» մակնիշի ավտոմեքենայի վարորդը: «Գազել» մակնիշի ավտոմեքենայի վարորդը ձերբակալվել է:

Նախաքննությունը շարունակվում է:

ԼՈՒՐԵՐ

ՈՐՈՇՎԱԾ Է

Երեւան քաղաքի դատախազ Սեւակ Հովհաննիսյանի հեռանալուց հետո թափուր է մնացել Երեւանի դատախազի պաշտոնը: Բանն այն է, որ պարտականությունների ժամանակավոր կատարումը շարունակում է դրված մնալ Երեւանի դատախազի տեղակալ Լիլիթ Գրիգորյանի ուսերին:

ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ որոշում է կայացվել, որ Լիլիթ Գրիգորյանն էլ նշանակվելու է Երեւան քաղաքի դատախազ: Իսկ ո՞վ է նա: Վերջինս երկար տարիներ քաղաքի դատախազությունում է աշխատել եւ վերջին 10 տարին Երեւան քաղաքի դատախազի տեղակալ է եղել:

ԻՆՔՆԱՄՊԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Երասխահուն գյուղի 39 տարեկան բնակիչը փորձել է վերջ տալ կյանքին: Մեզ հայտնի դարձավ, որ պահածոների գործարանում խմել է սպասք մաքրող հեղուկ եւ տեղափոխվել բուժօգնության:

ՀԵՐԹԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄԸ

Պետական եկամուտների կոմիտեի Հարավային մաքսատուն-վարչությունը եւ մաքսանենգության դեմ պայքարի վարչությունը, մշտապես իրականացնելով պայքար Ագարակ պետական սահմանի անցման կետով Հայաստանի Հանրապետություն ապօրինի ներմուծվող ապրանքներ հայտնաբերելու ուղղությամբ, բացահայտել են հերթական իրավախախտումը:

Օրերս Իրանից Հայաստան ժամանած իրանական բեռնատարի նկատմամբ իրականացված մաքսային հսկողության շրջանակում մաքսային զննման է ենթարկվել Հայաստանի Հանրապետություն ներմուծված եւ Հարավային մաքսատուն-վարչությունում որպես նավթային բիտում հայտարարագրված ապրանքը: Զննման արդյունքում կասկածներ են առաջացել, որ ներմուծված ապրանքը չի հանդիսանում նավթային բիտում: Նշանակված փորձաքննության արդյունքում պարզվել է, որ Իրանից Հայաստան տեղափոխված ավելի քան 25 տոննա քաշով ապրանքն իրենից ներկայացնում է շարժիչային յուղ:

Դեպքի կապակցությամբ Հարավային մաքսատուն-վարչությունում հարուցվել է վարչական վարույթ ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածի հատկանիշներով: Վարույթի շրջանակում պարզվել է, որ նշված իրավախախտման արդյունքում տեղի է ունեցել ավելի քան 20 միլիոն դրամի չափով մաքսային վճարների պակաս վճարում: Հաշվի առնելով, որ ի հայտ են եկել ՀՀ քրեական օրենսգրքի 290-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հանցագործության հատկանիշներ՝ նյութերը տրամադրվել են ՊԵԿ քննչական վարչություն:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ նոյեմբերի 3-ից 4-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 71 դեպք, որոնցից 14-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԽՈՍՏՈՒՄԸ ԿԻՐԱԳՈՐԾԵՆ

ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ

Կառավարությունն առաջիկա 5 տարում նախատեսում է իրականացնել առնվազն 50 բժշկական կենտրոնի կառուցում, վերակառուցում եւ ամբողջական վերազինում, 2023-ին հիմնականում նախատեսված են մարզային ամբուլատորիաների վերակառուցման, վերազինման աշխատանքներ. այս մասին ասաց ՀՀ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը ԱԺ մշտական հանձնաժողովների համատեղ նիստում 2023 թվականի պետբյուջեի նախագծի քննարկմանը:

«Կառավարության ծրագրով մենք առաջիկա 5 տարիներին պետք է իրականացնենք առնվազն 50 բժշկական կենտրոնների կառուցում, վերակառուցում եւ ամբողջական վերազինում: Ընթացիկ ֆինանսական բարեհաջող ավելացումների պարագայում կարծում ենք, որ առաջիկա տարիներին պետք է ամբողջությամբ այս խոստումն իրագործենք»,-ասաց Ավանեսյանը:

2022 թվականին կապիտալ շինարարությունների ընդհանուր ցանկը ներառում է 13 բժշկական կենտրոն: 2023-ին եւս ավելանում են բժշկական կենտրոններ: 2023 թվականին հիմնական ուղղվածությունը լինելու են մարզային ամբուլատորիաների վերակառուցման, վերազինման նախագծերը:

«Հաջորդ տարի մենք նախատեսել ենք թվով 20 ամբուլատորիաների նախագծանախահաշվային աշխատանքներ: Բանակցություններ ենք վարում Քաղաքաշինության կոմիտեի հետ՝ դրանք անելու մոդուլային տարբերակներով, այսինքն՝ունենալ մեկ նախագծված տիպային ամբուլատորիա, որը հետո տեղակապումով կարող ենք տարածել նաեւ բնակավայրերում: Բացի այդ, ներառված է նաեւ Շիրակում պոլիկլինիկայի վերակառուցում, Վանաձորի պոլիկլինիկայի վերակառուցում»,-ասաց նախարարը:

Ավանեսյանը ընդգծեց՝խոստացել են, որ առողջության առաջնային օղակի հզորացումը լինելու է իրենց առաջնահերթությունը, առաջիկա ծրագրերը հենց կոչված են ծառայելու այդ նպատակին:

Նախագծման աշխատանքներն ավարտվել են, եւ շինարարություն է լինելու Արմավիրի եւ Արարատի մարզերում ՀՎԿԱԿ-ի երկու մասնաշենքերում, վերակառուցվելու է նաեւ Վանաձորի ինֆեկցիոն հիվանդանոցի մասնաշենքը: Համաշխարհային բանկի ծրագրերով էլ 2023-ին կավարտվեն Մարտունու ԲԿ-ի եւ Եղեգնաձորի ԲԿ-ի շինարարական աշխատանքները: Մարտունու ԲԿ-ն ապրիլին կհանձնվի շահագործման, իսկ Եղեգնաձորինը՝աշնանը:

ՄԱՐԴ

ԴԵՆԴՐՈՊԱՐԿԻ ՏԵՍԱԿԱՆՈՒ ԿԵՍԸ ՉՈՐԱՑԵԼ Է

Իջեւանի դենդրոպարկի երկարամյա տնօրեն Մեխակ Սայադյանին 2021թ. օգոստոսի 16-ին ազատեցին զբաղեցրած պաշտոնից: Նրա ընտանիքը «Կանաչ սիմֆոնիա» ՍՊԸ-ով երկարաժամկետ վարձակալությամբ տիրում է դենդրոպարկի տարածքի մի մասին:

«Կանաչ սիմֆոնիա» ՍՊԸ-ն 2016թ. մարտի 15-ին հանգստի կազմակերպման նպատակով վարձակալել է Իջեւանի դենդրոպարկից 8,5 հա տարածք, վարձավճար է սահմանվել 917 հազար 147 դրամ, վարձակալության ժամկետ՝ 2040 թվականը: 2022թ.-ի հունվարի 4-ին «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ը Տավուշի մարզի առաջին ատյանի դատարան հայցադիմում է ներկայացրել՝ ընդդեմ «Կանաչ սիմֆոնիա» ՍՊԸ-ի՝ պայմանագրի լուծման պահանջով: Պաշտոնից ազատվելուց հետո Մ. Սայադյանը Իջեւան համայնքի Դիտավան գյուղի՝ իրեն պատկանող հողամասում իր ընտանիքի անդամներով տնկարան է հիմնել: Մ. Սայադյանը իրեն աշխատանքում վերականգնելու, հարկադիր պարապուրդի համար գումար բռնագանձելու պահանջներով Կոտայքի մարզի առաջին ատյանի դատարան քաղաքացիական հայց էր ներկայացրել: Նա հայտնեց, որ դատարանը բավարարել է իր հայցադիմումը, վերականգնել աշխատանքում, իրեն վճարել են իր հարկադիր պարապուրդի համար հասանելիք գումարը: 2022թ. սեպտեմբերի 23-ից Մ. Սայադյանը վերականգնվել է դենդրոպարկի տնօրենի պաշտոնում: Նա հայտնեց, որ «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ը Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանում հրաժարվել է «Կանաչ սիմֆոնիա» ՍՊԸ-ի հետ պայմանագրի լուծման պահանջից: Մ. Սայադյանը խիստ մտահոգված է շուրջ 60 տարի առաջ իր հոր՝ Լյուդվիգ Սայադյանի ստեղծած, իր ընտանիքի պահած, աճեցրած դենդրոպարկի ճակատագրով: Ավելի քան 2 տարի առաջ Իջեւանի, գինու, կոնյակի գործարանը ապօրինի շինարարություն է կատարել Աղստեւ գետի ափին եւ հունում, ապօրինաբար շուրջ 800 մետր երկարությամբ փոխել է գետի հունը, որի հետեւանքով դադարել է գործել դենդրոպարկը սնող ջրառը: 2020թ. հուլիսի 30-ից դենդրոպարկը Աղստեւ գետից ինքնահոս եղանակով ոռոգման ջուր չի ստանում: Անցած երկու տարի եւ երեք ամիսների ընթացքում դենդրոպարկում առկա հազվագյուտ եւ արժեքավոր ծառերն ու թփերը Աղստեւ գետի ջրով չեն ոռոգվել եւ չորացել են: Մեխակ Սայադյանի վկայությամբ՝ անջրդի լինելու եւ շոգ ամառների պատճառով Իջեւանի դենդրոպարկի տեսականու կեսը չորացել է: Հազվագյուտ եւ արժեքավոր մեծ թվով ծառեր եւ թփեր են չորացել նաեւ «Կանաչ սիմֆոնիա» ՍՊԸ-ի վարձակալած 8,5 հեկտար տարածքում: Տեղեկություններ կան, որ Շրջակա միջավայրի նախարարությունը բանակցում է Իջեւանի գինու, կոնյակի գործարանի հետ Աղստեւ գետի հունում կատարված ապօրինի շինարարության հետեւանքով շրջակա միջավայրին, Իջեւանի դենդրոպարկին, «Կանաչ սիմֆոնիա» ՍՊԸ-ին պատճառված վնասները վերականգնելու վերաբերյալ: Այդ վնասները շատ մեծ են, իսկ առանց ոռոգման ջրի մնացած դենդրոպարկը հաջորդ տարի վերջնականապես կչորանա: ՀՀ քննչական կոմիտեն տարիներով «քնեցրել է» Իջեւանի գինու, կոնյակի գործարանի կողմից կատարված ապօրինի շինարարությունների վերաբերյալ հարուցված քրեական գործը:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԼՈՒՐԵՐ

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը մշակել է ներդրումային քաղաքականության ռազմավարության նախագիծ եւ այն արդեն դրված է հանրային քննարկման Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում: ArmLur.am-ը նախագծի հիմնավորումից տեղեկանում է, որ Հայաստանի Հանրապետությունը չունի պաշտոնապես ձեւակերպված եւ հռչակված ներդրումային քաղաքականություն, որը պետք է միավորի ՀՀ կառավարության տեսլականը, նպատակները եւ դրանք իրագործող հստակ ծրագրային գործողությունները:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը նպատակ է դրել Համախառն կապիտալի կուտակում/ՀՆԱ հարաբերակցությունը հասցնել 25%-ի, իսկ ՕՈՒՆ զուտ ներհոսք/ՀՆԱ հարաբերակցությունը հասցնել 6%-ի, մինչդեռ նշված թիրախներին հասնելու համապարփակ ռազմավարական մոտեցումները, կառուցակարգերը կամ գործիքակազմերը որեւէ փաստաթղթով համակարգված ձեւով ամրագրված չեն: Հայաստանի Հանրապետությունը չունի պաշտոնապես ձեւակերպված եւ հռչակված ներդրումային քաղաքականություն, որը պետք է միավորի ՀՀ կառավարության տեսլականը, նպատակները եւ դրանք իրագործող հստակ ծրագրային գործողությունները՝ համեմատելի երկրների հետ մրցակցելու եւ ՕՈՒՆ ներգրավման նախանշված մակարդակներին հասնելու համար:

Նախագծով ներդրումային միջավայրի հիմնախնդիրները ներկայացվում են ըստ 3 հիմնական ուղղությունների՝ ներդրումային քաղաքականություն, ներդրումային արտոնություններ եւ ինստիտուցիոնալ կառուցվածք:

ՀԻՆ ԱՆՁՆԱԳԻՐ ՉԵՆ ՏԱ

Ժամանակավորապես՝ մինչեւ 2024թ. հունվարի 1-ը, կդադարեցվի ՀՀ քաղաքացիներին կենսաչափական անձնագրերի տրամադրումը՝ մինչեւ ապագա սերնդի տեխնոլոգիաներով եւ անվտանգության պայմաններով օժտված կենսաչափական անձնագրերի ստեղծումն ու աստիճանաբար հին անձնագրերի՝նորերով փոխարինումը: Այս մասին ArmLur.am-ը տեղեկանում է ՀՀ ոստիկանության նախագծից, որով առաջարկվում է փոփոխություններ կատարել «Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին» օրենքում, «Նույնականացման քարտերի մասին» եւ «Ինտերնետով հրապարակային եւ անհատական ծանուցման մասին» օրենքում:

Նախագծով առաջարկվում է ֆիզիկական անձին պաշտոնական էլեկտրոնային փոստ տրամադրել ոչ թե նույնականացման քարտի հետ համատեղ, այլ հանրային ծառայության համարանիշ ձեռք բերելու պահից եւ 16 տարին լրացած անձանց համար:

Մինչեւ 2022 թվականի վերջ կներդրվեն «խելացի» եւ «շարժական կապի» էլեկտրոնային նույնականացման համակարգերը, որոնք ոչ միայն գործող էլեկտրոնային քարտեր ունեցող անձանց համար, այլ նաեւ մինչեւ նոր համակարգի ներդրումը էլեկտրոնային ստորագրության ծառայության կարիք ունեցող անձանց համար կապահովեն բարձր որակի եւ ավելի հարմարավետ ծառայություն:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 13 ճՏՊ. 5 մարդ զոհվել է, 20-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՆԵՐԱՌՎԵԼՈՒ Է

ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄ

ՀՀ ԿԳՄՍՆ հասարակայնության հետ կապերի եւ տեղեկատվության վարչությունից Armlur.am-ին հայտնեցին, որ ՀՀ կառավարությունը հավանություն է տվել «Պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության եւ օգտագործման մասին» եւ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքներում լրացումներ կատարելու մասին նախագծերի փաթեթին:

Վերոնշյալ ՀՀ օրենքներում փոփոխություն կատարելու հրատապությունն ու անհրաժեշտությունը բխում են պատմամշակութային ժառանգության պահպանության եւ պաշտպանության կարեւորությունից: Առկա խնդիրները վկայում են, որ հուշարձանի սեփականատերերը հաճախ տեղյակ չեն լինում, որ ձեռք են բերում հուշարձան հանդիսացող շինություններ, ինչն իր հերթին առաջ է բերում պահպանությանն առնչվող մի շարք խնդիրներ: Հաշվի առնելով իրավիճակը՝ առաջ են քաշվել սեփականության վկայականներում այդ մասին ամրագրում անելու անհրաժեշտությունն ու կարեւորությունը: Առաջարկվող նախագծերով նախատեսվում է ամրագրել, որ հուշարձան լինելու մասին տեղեկությունն այսուհետ ներառվելու է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականում:

Նախատեսվող մյուս կարեւոր փոփոխությամբ առաջարկվում է սահմանել պատմամշակութային անշարժ ժառանգության պահպանությանը եւ օգտագործմանը վերաբերող հասկացությունները, հուշարձանների հաշվառման, նորահայտ հուշարձան պետական ցուցակում ընդգրկելու չափորոշիչները, հուշարձանների տարածքներում տեղադրվող տեղեկատվական ցուցանակների եւ հուշարձանների պահպանական պարտավորագրի ձեւերը:

Նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է կանոնակարգել բնագավառի իրավական դաշտը, միաժամանակ նպաստել պատմության եւ մշակույթի հուշարձանների բնագավառում իրականացվող մշակութային գործունեության նկատմամբ պատասխանատվության բարձրացմանը, խնդիրների լուծման արդյունավետությանը եւ մշակույթի հուշարձանների պահպանության ոլորտում միասնական պետական քաղաքականության մշակմանը:

ԳԱՂՏՆԻ ՈՉՆՉԱՑՈՒՄ

ԱԵՐՈՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

Կովկասում հետազոտողներն օգտագործում են աերոտիեզերական տեխնոլոգիաներ, որպեսզի բացահայտեն հայկական մշակութային ժառանգության գաղտնի ոչնչացումը: Հնագիտության այս նոր մեթոդները անհրաժեշտ են ավտորիտարիզմի դեմ գլոբալ պայքարում:

«Ադրբեջանի Հանրապետության Նախիջեւանի Ինքնավար Հանրապետության մայրաքաղաք Նախիջեւանի ամենաբարձր բլրի գագաթին վեր է բարձրանում ազգային պետության մոնոլիտը: Դեպի Պետական դրոշի հրապարակ եւ թանգարան են տանում աստիճանները, որոնք բարձրանում են կարգի բերված երկրաչափական լանդշաֆտով: Թանգարանում ներկայացված են պետության խորհրդանշանները՝ պատմական դրոշներ, դրամներ եւ քարտեզներ, իսկ հրապարակում ծածանվում է հսկայական ադրբեջանական դրոշը: Բայց, ինչպես եւ ազգային հիշողության պահպանման այլ վայրերում, այս համալիրում անարդարության խլացնող լռություն է տիրում:

Պետական դրոշի հրապարակը եւ թանգարանը զբաղեցնում են տարածք, որը ժամանակին գերեզմանատուն է եղել, որտեղ հայերը հուղարկավորել են իրենց մահացածներին 18-20-րդ դարերում: Գերեզմանատունը պարզապես ջնջվել է երկրի երեսից եւ դարձել գաղտնի մշակութային ոչնչացման լայնամասշտաբ պետական ծրագրի զոհերից մեկը. պետություն, որը ոչնչացրել է հայկական համայնքների գրեթե բոլոր հետքերը, որոնք դարերի ընթացքում Նախիջեւանը համարել են իրենց տունը:

Նախիջեւանը, որը սեղմված է Հայաստանի, Իրանի եւ Թուրքիայի միջեւ, մեկուսացված եւ լեռնային էքսկլավ է, որտեղ այցելել կարող են քչաթիվ օտարերկրացիներ. տեղ, որտեղ անարդարության վկայությունը նոր մոտեցում է պահանջում:

Caucasus Heritage Watch (CHW) հետազոտական նախաձեռնությունն օգտագործում է արբանյակային նկարներն ու դատափորձաքննությունների այլ մեթոդներ, որպեսզի վկայի մշակութային ոչնչացման գաղտնի ծրագրերի աշխատանքի մասին: Վերջերս մենք հրապարակել ենք 430-էջանոց հաշվետվություն, որտեղ մանրամասն նկարագրվում է 108 հայկական վանքերի, եկեղեցիների եւ գերեզմանատների լիակատար ոչնչացումը Նախիջեւանում 1997-2011թթ.: Սա նշանակում է, որ հայկական ժառանգության օբյեկտների 98 տոկոսը, որոնք չեն կարողացել հայտնաբերել եւ գնահատել, ոչնչացվել է:

Միջնադարի եւ նոր ժամանակների փաստագրված հուշարձանները չեն ոչնչացվել պարզապես. դրանք միտումնավոր լիովին ջնջվել են լանդշաֆտից եւ պաշտոնական պատմությունից: Եթե ժառանգության ոչնչացման նման մեթոդները տարածվեն որպես ազգային առասպելաստեղծման նոր մարտավարություն, մարդկության անցյալի անթիվ անփոխարինելի հուշարձաններ կարող են հայտնվել սպառնալիքի առջեւ ամբողջ աշխարհում:

Բայց նոր հասանելի տվյալները, վիզուալացման տեխնոլոգիաները եւ հնագետների մի մասի նոր պատրաստակամությունը՝ նետվելու հակամարտության ջրապտույտի մեջ, այժմ հնարավորություն են տալիս վկայել ժառանգության ոչնչացման մասին, ինչպես նաեւ միջամտել:

Նախիջեւանում ժառանգության ոչնչացման CHW-ի հետազոտությունը փաստագրել է մշակութային ոչնչացման այլընտրանքային, անհամեմատ ավելի կործանարար ձեւ: Այն տոտալ է, ոչ թե կոնյունկտուրային: Այն իրականացվում է պետական քաղաքականության բյուրոկրատական ապարատի միջոցով:

Այսօրինակ գաղտնի ոչնչացումը պահանջում է դատաբժշկական փորձաքննություն՝ մոտեցում, որը կարող է փաստագրել ավերածությունը, կանխատեսել նոր սպառնալիքները եւ նպաստել զսպմանը: Քրեագիտական փորձաքննությունն օգտագործում է առաջավոր տեխնոլոգիաներ, ինչպիսին է Երկրի հեռահար դիտարկումը եւ իմերսիվ ճարտարապետական մոդելավորումը՝ հետաքննելու համար մշակութային օբյեկտների չարաշահումները: Այն ապացույցներ է տալիս, որոնք կարող են օգտագործվել դատարանում կամ քաղաքացիական հասարակության ինստիտուտների կողմից, որոնք արդարության եւ ճշմարտության են ձգտում:

Նախիջեւանում ժառանգության ոչնչացման հաշվետվությունում CHW-ն օգտագործել է սառը պատերազմի ժամանակների ամերիկյան հետախուզության գաղտնազերծված լուսանկարները եւ խորհրդային տեղագրական քարտեզները՝ 127 հայկական վանքերի, եկեղեցիների եւ գերեզմանատների գեոլոկացիայի համար: Մենք օգտագործել ենք նաեւ հայ անվախ հետազոտող Արգամ Այվազյանի անգնահատելի գիտական աշխատանքը եւ ֆոտոարխիվը: Արգամ Այվազյանը, մեծ ռիսկի ենթարկվելով, փաստագրել է Նախիջեւանի հայկական մշակութային ժառանգությունը խորհրդային տարիներին: Այվազյանի աշխատանքները, որոնք օգտագործվել են առկա լուսանկարների համադրմամբ, թույլ են տվել մեզ գնահատել 110 հուշարձանի վիճակը: Բոլորը, բացի երկուսից, ոչնչացվել են, դրանց շինանյութը դուրս է բերվել, իսկ տեղանքը մաքրվել է հուշարձանների բոլոր հետքերից:

Սբ. Նշան վանքում, որը հիմնել են հայ վանականները 13-րդ դարում, արբանյակային լուսանկարներում երեւում է, որ շինությունը մասամբ պահպանված էր 1982թ.: Այդ ժամանակ Այվազյանը կարողացել է ուսումնասիրել հուշարձանը եւ վերակառուցել հատակագիծը: 2003թ. լուսանկարում պատկերված է տեղանքը՝ այն վերացնելու գործընթացում: Պատի մի մասը պահպանվել է, եւ այդ տեղում աղբակույտեր են: 2009թ. այս վկայությունն արդեն վերացվել է, ասես վանքը չի էլ եղել երբեք: Այն տեղերում, որտեղ նման ֆիկցիան դժվար էր պահել, օրինակ՝ Ջուղայի (ադրբեջաներեն՝ Ջուլֆա) հայկական միջնադարյան գերեզմանատանը, ռազմական օբյեկտներ են կառուցվել, որպեսզի արգելվի դիտորդների մուտքը:

Դեպքերի մեծ մասում տարածքը, որտեղ ժամանակին հայկական հուշարձաններ են եղել, մնում է չզբաղեցված: Բայց մի շարք դեպքերում վերացված հայկական հուշարձանների հիմքի վրա վեր են բարձրացել նոր հանրային շենքեր, ինչպիսին են Պետական դրոշի հրապարակն ու թանգարանը: 1973թ. ամերիկյան հետախուզության արբանյակից արված լուսանկարում լավ երեւում է «Նոր հայկական գերեզմանոցը», որը մի ժամանակ ծածկում էր բլուրը: Բացի այդ, խորհրդային քարտեզագիրները գերեզմանոցը նշել են 1940-ականներից մինչեւ 1990թ. տեղագրական քարտեզներում: Այվազյանը գրանցել է մոտ 1 000 տապանաքար իր դաշտային աշխատանքների ժամանակ, որոնք կատարել է 1964-1987թթ., դրանցից մոտ 400-ը հայերեն տապանագրեր են ունեցել, բայց 2005թ. արբանյակային լուսանկարում երեւում է միայն մեկ բեռնատար գերեզմանոցի հարթեցված տեղանքում: Հենց նոր բուլդոզերներով մաքրված գերեզմանատունն այժմ տրավմաների, բռնության եւ ատելության սպիներ է կրում:

ԼՈՒՐԵՐ

ԳՈՒՄԱՐ ԿՀԱՏԿԱՑՆԵՆ

2023թ. աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությանը պետբյուջեից կհատկացվի մոտ 648 մլրդ 453,5 մլն դրամ: Այս մասին Ազգային ժողովում՝ խորհրդարանական մշտական հանձնաժողովների համատեղ նիստում՝ 2023թ. պետական բյուջեի նախագծի քննարկման ժամանակ՝ նոյեմբերի 4-ին, ասել է հանրապետության ֆինանսների նախարար Տիգրան Խաչատրյանը:

2022թ. նույն ոլորտին հատկացվել է 589 մլրդ 860 մլն դրամ: «2021թ. գերատեսչությանը հատկացվել էր 619 մլրդ 776,1 մլն դրամ»,- նշել է Խաչատրյանը:

ԾԱՌԱՏՈՒՆԿ ԿԻՐԱԿԱՆԱՑՎԻ

Երեւանի քաղաքապետարանի «Կանաչապատում եւ շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ը նոյեմբերի 5-ին՝ ժամը 10:30-ին, Ծիծեռնակաբերդի բարձունքում եւ Սարալանջում՝ 10 հեկտար տարածքի վրա, կիրականացնի ծառատունկ: Կյանքի է կոչվում աննախադեպ ծրագիր. հիմնվում է անտառ-տնկարկ:

Քաղաքապետարանից հայտնում են, որ կատարվել է սանիտարական էտ, եւ ծառատունկի նպատակով իրականացվել են խրամատների փորման աշխատանքներ: Տնկվելու է շուրջ հինգ հազար ծառ եւ երեք հազար թուփ:

Ներկա են լինելու Երեւանի քաղաքապետ Հրաչյա Սարգսյանը, Երեւանի քաղաքապետի առաջին տեղակալ Լեւոն Հովհաննիսյանը, Երեւանի քաղաքապետի տեղակալները, «ԿՇՄՊ» ՀՈԱԿ-ի ղեկավարությունը, կառավարության անդամներ:

● «Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ՀԱՆԴԻՍԱՎՈՐ

ԲԱՑՎԵՑ ՕՀԱՆ ԴՈՒՐՅԱՆԻ ԱՐՁԱՆ-ՀՈՒՇԱԿՈԹՈՂԸ

Ականավոր դիրիժոր Օհան Դուրյանի 100-ամյա հոբելյանի առթիվ նոյեմբերի 4-ին Ազատության հրապարակում՝ Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի հարակից տարածքում, տեղադրվեց մաեստրոյի արձան-հուշակոթողը:

Արձան-հուշակոթողի բացմանը ներկա էին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը, նրա տիկինը՝ Աննա Հակոբյանը, ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանը, նախարարներ, բարձրաստիճան այլ պաշտոնյաներ եւ մշակութային գործիչներ:

Նիկոլ Փաշինյանը խոստովանեց՝ երբ տեսել է քանդակի լուսանկարը, ցնցվել է: «Ինձ համար Օհան Դուրյանը հենց այսպիսին էր: Նա այսպիսին չէր երեւում բեմում: Հիշում եմ Ստաս Նամինի՝ Օհան Դուրյանի մասին պատմող վավերագրական ֆիլմը, որում Դուրյանը փորձի ժամանակ կարճաթեւ շապիկով է: Նրա բազուկների, այդ մկանուտ, տպավորիչ բազուկների աշխատանքից ու տեսքից ես ցնցվեցի, որովհետեւ ֆրակով Դուրյանը տեսանելի եւ ամբողջությամբ հասկանալի չէ: Այդ մերկացած, բազուկոտ ձեռքերի անհասկանալի, բայց միեւնույն ժամանակ գրավող շարժումն է Օհան Դուրյանը: Եթե Օհան Դուրյանն այլ արձան ունենար, համարեք, որ դա Օհան Դուրյանի արձանը չէ»,- նշեց Փաշինյանն ու շնորհավորեց մտահղացման հեղինակին եւ գաղափարն իրականացնողներին:

Գաղափարի հեղինակ Վահան Վարդապետյանն էլ հանդիսությունը վերնագրեց «Օհան Դուրյանի երրորդ վերադարձը»: «1957 թվական՝ վերադարձ Խորհրդային Հայաստան, 1991 թվական՝ վերադարձ անկախացած Հայաստանի Հանրապետություն, եւ երեկ՝ 2022 թվականի նոյեմբերի 4՝ վերադարձ երրորդ կամ հավերժական: Աշխարհահռչակ դիրիժոր, մեծ քաղաքացի եւ մտավորական, իմ իսկ բնութագրմամբ՝ Հայաստանի ամենաազատ եւ ամենաանկախ քաղաքացի Օհան Դուրյանին ժողովրդի իշխանությունը հավերժ վերադարձրեց Ազատության հրապարակ՝ Ալ. Սպենդիարյանի անվան օպերային թատրոնի հարակից տարածք»,-շեշտեց Վարդապետյանն ու ընդգծեց, որ տեղի ընտրությունը խորհրդանշական է:

Նրա խոսքով՝ կատարողական արվեստի համաշխարհային մեծությունն օպերայի եւ ֆիլհարմոնիայի մոտ պետք է լիներ: Նա շեշտեց՝ մինչեւ կյանքի վերջին շունչը Դուրյանը հանուն ժողովրդի ազատության, ինքնիշխանության եւ անկախության համար էր պայքարում եւ համաժողովրդական շարժման դիրիժոր էր: «Ֆրանսիայի քաղաքացին, արվեստի եւ գրականության պատվո ասպետը Ֆրանսիայի հրապարակին այսքան մերձ է, եւ, ամենակարեւորը, կարծում եմ՝ փառավորվում է Օհան Դուրյանի հոգին, քանի որ այսքան մոտ է իր պաշտելի կոմպոզիտոր Ալեքսանդր Սպենդիարյանի շիրիմին»,- ասաց նա: Օհան Դուրյանի այրին երախտագիտություն հայտնեց նախաձեռնողներին ու աջակիցներին գաղափարի եւ դրա իրագործման համար: Նա խաղաղություն մաղթեց երկրին, իմաստություն՝ ժողովրդին, ու նվաճումներ՝ մշակութային եւ այլ ասպարեզներում:

Քանդակագործ Գետիկ Բաղդասարյանը Օհան Դուրյանին մեր ազգի սյուներից է համարում, կարծում է, որ նա մշակույթի մեծ վարպետ էր: «Հենց այնպես չէ, որ նրան ասում ենք մաեստրո: Շատ քիչ մարդկանց է հնարավոր այդպես ասել: Ցանկացել եմ գլխի, ձեռքերի, ապակե սյուների միջոցով երաժշտություն, ռիթմ ցույց տալ, ներկայացնել Դուրյանի էությունը: Հենց այդպես եմ պատկերացնում Դուրյանին: Անհամեստ թող չհնչի, սակայն կարծում եմ՝ ստացվել է: Կարեւոր էր, որ Թումանյանի, Սպենդիարյանի կողքին Օհան Դուրյանը ո՛չ մեծ, ո՛չ փոքր երեւա»,- նշեց քանդակի հեղինակն ու շնորհակալություն հայտնեց իր աջակիցներին:

Օհան Դուրյանի որդի Նարեկ Դուրյանը նշեց, որ Օհան Դուրյանը խիստ հայր է եղել: «Դաստիարակությունն այսօր վերածվել է երկխոսության, որը երեխան է վարում ծնողների հետ: Այդպես չպետք է լինի: Մի ծայրահեղությունից մյուսն ընկնել պետք չէ: Ծնողը պետք է երեխային դաստիարակի ու խիստ լինի:

Դա շատ լավ պտուղներ է տալիս: Այդպես եմ կարծում՝ նայելով ինձ: Օհան Դուրյանը շատ խիստ հայր էր, ինչի համար շնորհակալ եմ նրան ու երախտապարտ»,-ասաց դերասանը: Երեւանի տիկնիկային թատրոնի գեղարվեստական ղեկավար Ռուբեն Բաբայանը նշեց՝ Դուրյանի կյանքը կապված էր Հայաստանի ոչ միայն մշակութային, այլեւ քաղաքական կյանքի հետ: «Այս հրապարակում օպերային թատրոնն է, որտեղ իր կյանքի մի զգալի մասն է անցկացրել Դուրյանն ու հիացրել է բոլորիս իր արվեստով: Արձանի մեջ շատ էքսպրեսիա կա, ինչը բնորոշ էր մեծ մաեստրոյին:

Քաղաքակիրթ է դառնում այն հանրությունը, որը հասկանում է՝ մշակույթն իր կյանքի կարեւորագույն մասն է, եւ ես հույս ունեմ, որ այս արձանն ու երաժշտությունը, որն այստեղ հնչում է, մեզ բոլորիս կդարձնեն ավելի կիրթ, ավելի հանդուրժող, մարդկային, իսկ մաեստրոն կապրի»,-հավաստիացրեց Բաբայանը: Քանդակագործը Գետիկ Բաղդասարյանն է, ճարտարապետը՝ Սահակ Սաֆարյանը, ապակե պատվանդանի հեղինակն Արսեն Պետրոսյանն է:

ԼՈՒՐԵՐ

ԱՐԱՄ mp3-Ի ԴՈՒՍՏՐԸ

Երգիչ Արամ mp3-ի կինը՝ Աննան, երեկ առաջին անգամ առանց թաքցնելու ցուցադրել է դստեր՝ Շողերի դեմքը: Լուսանկարում երեւում է, թե ինչպես է Արամը ժամանակ անցկացնում զավակների եւ դստեր հետ:

Նշենք, որ Արամ mp3-ին ունի երկու որդի եւ մեկ դուստր:

ՎԵՐՋԻՆ ՀՐԱԺԵՇՏԸ

Երեկ վերջին հրաժեշտը տվեցին տաղանդաշատ թատերական գործիչ Վահե Շահվերդյանին: Մեծ վարպետի մահվան բոթը ցնցել եւ մեծ ցավ է պատճառել նրա սաներին եւ դերասաններին: Ավելի վաղ հայտնել էինք, որ 77 տարեկան հասակում մահացել է ռեժիսոր, սցենարիստ, ՀՀ ժողովրդական արտիստ Վահե Շահվերդյանը: Նրա մահվան մասին հայտնել էր որդին՝ բեմադրիչ, հաղորդավար Սուրեն Շահվերդյանը:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԿԱՐԻԵՐԱՆ ԱՎԱՐՏԵՑ

«Բարսելոնա»-ի 35-ամյա իսպանացի պաշտպան Ժերար Պիկեն հիմա կարիերան ավարտելու պատճառով կատալոնական ակումբից կստանա պայմանագրով նախատեսվածից 30 միլիոն եվրո քիչ գումար:

Նոյեմբերի 5-ին անցկացվելիք Իսպանիայի առաջնության 13-րդ տուրի «Բարսելոնա» - «Ալմերիա» հանդիպումը վերջինը կլինի Իսպանիայի հավաքականի նախկին ֆուտբոլիստի կարիերայում:

Պիկեն «Բարսելոնա»-ի սան է, 2004-ին տեղափոխվել է անգլիական «Մանչեսթեր Յունայթեդ», 2006-ին մեկ տարով վարձակալությամբ միացել է «Ռեալ Սարագոսային», 2008-ից դարձյալ խաղում է կատալոնական ակումբում՝ դառնալով Իսպանիայի 8-ակի չեմպիոն, Չեմպիոնների լիգայի եռակի գավաթակիր, Եվրոպայի եռակի սուպերգավաթակիր, աշխարհի եռակի ակումբային չեմպիոն: Իսպանիայի հավաքականում Պիկեն դարձել է աշխարհի ու Եվրոպայի չեմպիոն:

ՄՈՒՐԻՆՅՈՆԸ ԿԱՏԱՐՅԱԼ Է

Իսպանիայի չեմպիոն եւ Չեմպիոնների լիգայի գավաթակիր Մադրիդի «Ռեալ»-ի իտալացի գլխավոր մարզիչ Կառլո Անչելոտին բարձր է գնահատել պորտուգալացի Ժոզե Մոուրինյոյի աշխատանքն իտալական «Ռոմա»-ի գլխավոր մարզչի պաշտոնում:

«Արդեն երկար տարիներ ճանաչում եմ Մոուրինյոյին եւ կարծում եմ, որ «Ռոման» նրան փոխել է: Նրանց միությունը կատարյալ է:

Մոուրինյոն բացառիկ անհատականություն է ֆուտբոլային աշխարհում: Նրա բարեխղճությունն ու խելքը մնում են նախկին մակարդակի վրա»,- ասել է Անչելոտին Մոուրինյոյի մասին գիրք գրող լրագրող Իվան Ջաձարոնիին:

Մոուրինյոն անցած մրցաշրջանում է գլխավորել «Ռոման», որը նվաճեց Կոնֆերենցիաների լիգայի գավաթը: Այս մրցաշրջանում իտալական թիմը դուրս է եկել Եվրոպայի լիգայի փլեյ-օֆֆ:

ԿԱՐԵՎՈՐ 5 ՏԻՏՂՈՍ

Մադրիդի «Ռեալի» գերմանացի կիսապաշտպան Տոնի Կրոսը ավելի կարեւոր է համարում իր կարիերայում 5 տիտղոսը Չեմպիոնները լիգայում, քան աշխարհի չեմպիոնի կոչումը, որը նվաճել է 2014-ին Գերմանիայի հավաքականի կազմում:

«Այդքան էլ բարդ հարց չէ: Ես կընտրեի 5 տիտղոսը Չեմպիոնների լիգայում: Հարցը քանակի մեջ է: Ես միշտ սիրել եմ կայունություն: 8 տարում 5 հաղթանակն այդ մրցաշարում բացառիկ նվաճում է»,-ասել է Տոնի Կրոսը:

Կրոսն առաջին անգամ Չեմպիոնների լիգայի գավաթակիր է դարձել Մյունխենի «Բավարիա»-ի հետ 2013-ին, հետո չորս անգամ այս մրցաշարում հաղթել է Արքայական ակումբի հետ (2016, 2017, 2018, 2022):

● *Նոյոմբերի 5-ին Երեւանի պետական կամերային թատրոնում տեղի կունենա «Հինգ պատմություն՝ սիրո մասին» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 2000-6000 դրամ: Սկիզբը՝ ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս ներկայացնել գինու արտադրության ծանուցում:

Միասնիկ Խաչատրյան (41 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. «Գինու, խնձորի եւ պտղահատապտղային այլ գինիների արտադրություն» ծանուցման ենթակա գործունեության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են՝ «Գործունեության իրականացման ծանուցման մասին» եւ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների համաձայն: «Գինու, խնձորի եւ պտղահատապտղային այլ գինիների արտադրություն» գործունեության իրականացմամբ զբաղվելու իրավունք ունեն իրավաբանական եւ ֆիզիկական անձինք, ինչպես նաեւ անհատ ձեռնարկատերեր, որոնք նշված գործունեությամբ զբաղվելու համար ՀՀ ֆինանսների նախարարություն են ներկայացնում ՀՀ կառավարության 2016 թվականի հունիսի 30-ի «Ծանուցման ձեւերը, ծանուցման ենթակա գործունեություն իրականացնող անձանց հաշվառման գրանցամատյանների վարման եւ հաշվառված անձանց տվյալների հրապարակման կարգը սահմանելու մասին» թիվ 673-Ն որոշման թիվ 1 հավելվածով սահմանված ծանուցումը եւ կից փաստաթղթերը, որոնք կարող են ներկայացվել առձեռն, փոստով: Համաձայն «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի՝ «Գինու, խնձորի եւ պտղահատապտղային այլ գինիների արտադրություն» գործունեության իրականացման համար տարեկան պետական տուրքը կազմում է 25.000 ՀՀ դրամ:

ՀՀ ֆինանսների նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ծանուցում ներկայացնելու համար անձը տարեկան պետական տուրքը վճարում է Կենտրոնական գանձապետարանի հետեւյալ հաշվեհամարին՝

- իրավաբանական անձինք՝ 900005166435,
- ֆիզիկական անձինք՝ 900005166336:

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ի՞նչ հիմքերով է քաղաքացին ազատվում պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից:

Սամվել Սարգսյան (23 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայությունից ազատվում է այն քաղաքացին, որը՝

1) առողջական վիճակի պատճառով ճանաչվել է ոչ պիտանի զինվորական ծառայության համար,

2) մինչեւ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ընդունելը ոչ պակաս, քան 12 ամիս ծառայել է այլ պետության զինված ուժերում, կամ այլ պետությունում ոչ պակաս, քան 18 ամիս անցել է այլընտրանքային ծառայություն,

3) ընտանիքի միակ արու զավակն է եւ ունի Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների կամ զինված ուժերում կամ այլ զորքերում կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով Հայաստանի Հանրապետությունում տեղակայված օտարերկրյա պետությունների զինվորական ստորաբաժանումներում զինվորական ծառայության ընթացքում զոհված (մահացած) ծնող կամ եղբայր կամ քույր:

ՀՀ պաշտպանության նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայությունից քաղաքացին ազատվում է նաեւ «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերով ու 24-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված դեպքերում:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Վայոց ձորի մարզում

Երեւան-Երասխ-Մեղրի ավտոճանապարհի 97 կմ հատվածում՝ Չիվա գյուղի վարչական տարածքում, բեռնատար ավտոմեքենա է այրվել, եւ երթեւեկությունը միակողմանի փակվել է: Հրդեհի պատճառով տուժածներ չկան:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **4.11.2022**
Հասցեն՝ Զեյթունի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: